



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2025 թվականի N 1213

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 12 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1089
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 12.05.2025 թվականի թիվ 1089 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 մայիսի 2025 թվականի « Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 56/2 հասցեում գտնվող հողամասը ավտոտնակի ընդլայնման նպատակով Տիգրան Սուկրատի Քոթանջանին վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 1089 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշման մեջ «2-րդ կետը » կարդալ որպես «1-ին կետ»
2. Որոշման մեջ «1-ին կետը» կարդալ որպես «2-րդ կետ» և հետևյալ նոր բովանդակությամբ


«1. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 56/2 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 25.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01102024-06-0034 վկայականի, ավտոտնակի ընդլայնման նպատակով 8 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրել Տիգրան Սուկրատի Քոթանջանին՝ 1քմ համար ամսական 24 դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 25
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1214

ՍԱՆԹՈՒՐ ՄԵԽԱԿԻ ՊՈԴՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկաման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով 29 ապրիլի 2025 թվականին հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ըստ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկաման և տրանսպորտի բաժնի կողմից 29 ապրիլի 2025 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի, Սանթուր Մեխակի Պողոսյանը (հաշվառման հասցե՝ գ. Շահումյան, 4-րդ փողոց տ. 14, անձնագիր AT0594515) Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի 59 շենքի հարակից տարածքում առանց թույլտվության ոչ սահմանված վայրում իրականացնում է բացօթյա առևտուր (վաճառում է կանաչեղեն), որը համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի հիմքով 29 ապրիլի 2025 թվականին հարուցվել է վարչական վարույթ, որի հիման վրա 12 մայիսի 2025 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին պատշաճ ծանուցվել և ներկայացել է Սանթուր Մեխակի Պողոսյանը, (հիմք՝ փոստային առաքման ծանուցման հետադարձ թիվ ALO127678960AM կտրոն): Սանթուր Մեխակի Պողոսյանը

հայտնեց, որ Տիգրան Մեծի պողոտայի 59 շենքի հարակից տարածքում վաճառել է կանաչեղեն առանց թույլտվության, բայց երբ առևտրի սպասարկաման և տրանսպորտի բաժնի կողմից արգելել են վաճառել, այդ օրվանից նշված վայրում էլ չի զբաղվել բացօթյա առևտրով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա: Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից մինչև հարյուրտասնապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219'-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 162-րդ, 219-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 14-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սանթուր Մելսակի Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սանթուր Մելսակի Պողոսյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1215

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1057
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 07 մայիսի 2025 թվականի թիվ 1057 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 07 մայիսի 2025 թվականի «Վանաձոր քաղաքի Վանաձոր համայնք Ն. Տիգրանյան փողոց 5/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված շինությունները և դրանցով զբաղեցված հողամասը Սուրեն Սեյրանի Քերոբյանին օտարելու մասին» թիվ 1057 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Որոշման 1-ին կետը «81.27 քմ ընդհանուր արտաքին մակերեսով» բառերից հետո լրացնել «շինությունները» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N1216

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ 4 ԹԱՂԱՄԱՍ 26/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԿԱԴԻ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արկադի Սանասարի Սիրունյանի 22.05.2023 թվականի թիվ 02/129 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19052025-06-0005 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**


1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ 4 թաղամաս 26/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.2քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 39780 (երեսունինը հազար յոթ հարյուր ութսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.2քմ մակերեսով հողամասը 89730 (ութսունինը յոթ հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արկադի Սանասարի Սիրունյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արկադի Սանասարի Սիրունյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԵՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N1217

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20
ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պավել Գևորգի Դավթյանի լիազորված անձ Արամ Ռաֆայելի Այվազյանի 18.12.2023թ. թիվ 02/22476 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 29.04.2025 թվականի լիազորագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 16.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023FKMBHH), 21.03.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ25/25ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաք Մոսկովյան փողոց թիվ 20 շենքի բակում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 20.6 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 17.8 քմ) ավտոտնակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաք Մոսկովյան փողոց թիվ 20 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Մոսկովյան փողոց , 20/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1218

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1312
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին 18.07.2024թ. թիվ Մ-18072024-06-0014 որոշումը, 12 հունիսի 2024 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1312 որոշումը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հունիսի 2024 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պողոտա թիվ 44 շենքի բակում ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1312 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հունիսի 2024 թվականի թիվ 1312 որոշման 1-ին կետի «19.61» թվերը փոխել «14.56» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1219

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ
9/33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ
ՌՈՄԻԿԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռոմիկի Դալլաքյանի 26.11.2021թ. թիվ 16771 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24022025-06-0059 վկայականը, **26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը**, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.


1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց 9/33 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 17.04քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.1քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Արմեն Ռոմիկի Դալլաքյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արմեն Ռոմիկի Դալլաքյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 /երեսուն/ դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 /քսանչորս/ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1220

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1470
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերութան Մարգարի Կոստանդյանի 18.04.2025թ. թիվ 02/5451 դիմումը, 24/03/2025թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-24032025-06-0083 որոշումը, 28 հունիսի 2024 թվականի թիվ 1470 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 հունիսի 2024 թվականի « Վանաձոր քաղաքի Գայի փողոց թիվ 3 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Մերութան Մարգարի Կոստանդյանի և Հերմինե Սիրակի Մագթադյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1470 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 28 հունիսի 2024 թվականի թիվ 1470 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1221

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1019
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյովա Արամի Դարբինյանի 15.05.2025թ. թիվ 02/6656 դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 14/05/2025 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14052025-06-0159 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28 ապրիլի 2025 թվականի թիվ 1019 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 ապրիլի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաք Գ. Նարեկացու փողոց 3/1 հասցեում գտնվող Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ծածկը և դրանով զբաղեցված հողամասը Լյովա Արամի Դարբինյանին օտարելու մասին» թիվ 1019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.


1. Որոշման 1-ին կետում «32120 (երեսուններկու հազար հարյուր քսան)» թիվը փոխարինել «290000 (երկու հարյուր իննսուն հազար)» թվով:

2. Լյովա Արամի Դարբինյանին՝ ինքնական շինության օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը՝ (290000-32120) 257880 (երկու հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր ութսուն) դրամ գումարը վճարել 900235401131 հաշվեհամարին»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N1222

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
404 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 811 ԵՎ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1059
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 16.05.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ (Կ-16052025-06-0067) որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 10.02.2025 թվականի թիվ 404 որոշումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 10 փետրվարի 2025 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի 3-րդ նրբանցքում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 404 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետը խմբագրել հետևյալ նոր բովանդակությամբ «1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի 3 նրբանցքում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 16.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 15.57քմ) ավտոտնակի, 2.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 1.68քմ) նկուղի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 16.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:»

2. 10.02.2025թ. Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 404 որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 02 ապրիլի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 10 փետրվարի 2025 թվականի թիվ 404 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 811 որոշումը:


4. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 07 մայիսի 2025 թվականի «Վանաձորի համայնքի ղեկավարի 10 փետրվարի 2025 թվականի թիվ 404 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Վանաձորի համայնքի ղեկավարի 10 փետրվարի 2025 թվականի թիվ 811 որոշումը ուժը կորցրած ճանաչելու կատարելու մասին » 1059 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N1223

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՓՈՂՈՅ 1/5 ԵՎ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ
ՓՈՂՈՅ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29042025-06-0020 և 1855387 վկայականները, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Փարաջանովի փողոց թիվ 1 հասցեում գտնվող 0,0060 հա մակերեսով 06-001-0040-0102 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի:

2. Միավորել Վանաձոր քաղաքի Ս. Փարաջանովի փողոց 1/5 և Փարաջանովի փողոց թիվ 1 հասցեներում գտնվող, Վանաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.074870 հա ընդհանուր մակերեսով հողամասերը՝ համաձայն «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագծի:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել տնտեսային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ս. Փարաջանովի փողոց 2 հողամաս:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1224

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ
27 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՔՍԻՄ ԵՐՎԱՆԴԻ ՄԱՄՈՒԼՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մաքսիմ Երվանդի Մամուլյանի 26.02.2025 թվականի թիվ 02/2790 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012025-06-0053 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը և հողամասի բաժանման սխեման, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 25.02.2025 թվականին տրված՝ հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025GBHVPJ և 2025VUFEF6) տեղեկանքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Տարանջատել Վանաձոր համայնք, քաղաք Վանաձոր Տավրոս թաղամասի 3-րդ փողոց 27 բնակելի տուն հասցեում գտնվող Մաքսիմ Երվանդի Մամուլյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Տավրոս թաղամասի 3-րդ փողոց 27 բնակելի տուն հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.


ա. 167.6քմ մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 155.15քմ բնակելի տանը և 7.6քմ մառանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 3-րդ փողոց, 27 բնակելի տուն:

բ. 149.0քմ մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 156.01քմ բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամասի 3-րդ փողոց, 27/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N1225

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆԻ ՓՈՂ. 51/2 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐԹՈՒՐԻ ԵԴՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վլադիմիր Արթուրի Եդոյանի 17.03.2025 թվականի թիվ 02/3671 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 988159 վկայականը, 30.12.2023 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023FFZBA6), «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 24.03.2025թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 60/25 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Աղայանի փող. 51/2 հասցեում գտնվող, Վլադիմիր Արթուրի Եդոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 6,25քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 4.81քմ) բնակելի տունը, 12.84քմ մակերեսով հարթակը և 0.13քմ մակերեսով պարիսպը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Աղայանի փող. 51/2 հասցեում գտնվող, Վլադիմիր Արթուրի Եդոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան գբադեցրած 0.01680հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:


3. Վլադիմիր Արթուրի Եդոյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 19.22քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 52 380 (հիսուներկու հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. մայիսի 26
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1226

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 68
ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Զանիբեկի Խաչատրյանի 04.12.2023թ. թիվ 02/21452 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 02.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023BCAABY), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան Խճուղի թիվ 68 շենքի հարավային մասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 42.40քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 41.0քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 42.40քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ

հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Երևանյան խճուղի թիվ 68 շենքի հարավային մասում գտնվող մետաղական ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Երևանյան խճուղի, 68/11 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 1227

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0029-0032) ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Սարգսի Քոչարյանի 30.04.2025 թվականի թիվ 02/6010 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 965407 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.


Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր: 06-031-0029-0032) հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք Քոթեջային 9-րդ փողոց, 3/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N1228

ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆԻ ՀԱՂՈՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրության, զեկուցագրի և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացված գրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.03.2025 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից 21.03.2025թ. ստացված գրության համաձայն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի 2. Անդրանիկի փողոց թիվ 56 շենքի 37 տարածք հասցեում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02072024-06-0017 վկայական) Դավիթ Սամվելի Մարգարյանին (հաշվառման հասցե՝ Լոռու մարզ, գ. Շիրականուտ փ. 21, տ. 3) սեփականության իրավունքով պատկանող տարածքում ինքնակամ իրականացվել են շինարարական աշխատանքներ: 15.01.2024թ Մարգարիտ Ալեքսանի Հագոյանի կողմից ուղարկված թիվ 02/823 դիմումին ի պատասխան Վանաձորի համայնքապետարանը թույլատրել է 1 (մեկ) տարի ժամկետով 2. Անդրանիկի փողոց թիվ 56 շենքի 37 տարածք հասցեի հյուսիսային մասուն գտնվող հողամասը բարեկարգել (առանց կառուցապատման իրավունքի):

2025 թվականի մարտի 24-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի ապրիլի 07-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով

պատշաճ ծանուցվել են Դավիթ Սամվելի Մարգարյանը և Մարգարիտ Ալեքսանի Հազոյանը (հիմք՝ փոստային հետադարձ ծանուցման անդորագիր թիվ ALO127205143AM, ALO127195865AM), սակայն Մարգարիտ Ալեքսանի Հազոյանը չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին: Դավիթ Սամվելի Մարգարյանը հայտնել է, որ Զ. Անդրանիկի փողոց թիվ 56 շենքի 37 տարածք հասցեի անշարժ գույքը ձեռք է բերել 18.06.2024 թվականին և շինարարական բոլոր աշխատանքները կատարվել են մինչ իր կողմից գույքի ձեռք բերելը: Վարչական վարույթի լուսմների ընթացքում հայտնի չի դարձել, թե ում կողմից է կատարվել իրավախախտումը:

21.03.2025 թվականին ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացված գրության մեջ նշված շինարարական աշխատանքները, ըստ ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրամադրված զեկուցագրի բարեկարգման աշխատանքներ են, որոնց համար տրամադրվել է բարեկարգման թույլտվություն (1 տարի ժամկետով՝ առանց կառուցապատման իրավունքի), և շինարարական թույլտվություն հարկավոր չէ դրանց իրականացման համար:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 17.04.2025 թվականին փոխօգնության կարգով՝ ՀՀ համայնքային ոստիկանության Բազումի բաժնին է ուղարկվել թիվ 01/3172 գրությունը, սույն վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների կապակցությամբ որոշակի պարզաբանումներ ստանալու համար:

Գործի համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել վարչական վարույթի ժամկետը: Վանաձորի համայնքապետարանում 25 ապրիլի 2025 թվականին ընդունվել է «Մարգարիտ Ալեքսանի Հազոյանի վերաբերյալ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 1003 որոշումը:

16.05.2025 թվականին ՀՀ համայնքային ոստիկանության Բազումի բաժնի կողմից ստացված թիվ 59/4-1195 գրության համաձայն, Զ. Անդրանիկ 56 շենքի 37 տարածքի շինարարական աշխատանքները կատարել է Դավիթ Հենրիկի Գևորգյանը, ով հանդիսանում է Մարգարիտ Ալեքսանի Հազոյանի որդին, իսկ վերը նշված տարածքի ներկայիս սեփականատեր է հանդիսանում Դավիթ Սամվելի Մարգարյանը: Նշել են նաև, որ ստուգումները շարունակվում են, սակայն մինչ օրս լրացուցիչ տեղեկություններ չեն տրամադրվել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ

1. 24.03.2025 թվականին Մարգարիտ Ալեքսանի Հազոյանի նկատմամբ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարճել՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վարչական ակտի ընդունման անհրաժեշտության վերացման պատճառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


26 մայիսի 2025 թվականի N 1229

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-3 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 6
ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՅԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձոր համայնքի ավագանու 13/05/2024 թվականի թիվ 28 որոշումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**


Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-3 6-րդ թաղամաս 6 հողամաս հասցեին կից գտնվող 0.015400 հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տարոն-3 6-րդ թաղամաս, 6/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 26
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

29 մայիսի 2025 թվականի N 1230

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1887 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 447 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով Կարինե Թելմանի Հարությունյանի (ծնված 19.02.1956 թ.), Սամվել Աղվանի Ավագյանի (ծնված 23.10.1953 թ.) և Արայիկ Սամվելի Ավագյանի (ծնված 16.03.1990 թ.) լիազորված անձ՝ Շուշանիկ Լևոնի Իսահակյանի 14.01.2025 թվականի թիվ 01/22 գրությունը, 17/04/2025 թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17042025-06-0113 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 19 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 1887 և 12.02.1997 թվականին տրված թիվ 37/7 որոշումները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 03.06.2024 թվականին տրված լիազորագիրները, Վանաձոր համայնքի ղեկավարի 24.11.2022 թ. տրված թիվ 01/11828 գրությունը, Վանաձոր համայնքի ավագանու 13.05.2024 թ. թիվ 33 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 11 հոկտեմբերի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամասի թիվ 30 հասցեում գտնվող բնակելի տան (քոթեջի) և դրա պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Սամվել Աղվանի Ավագյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1887 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման վերնագիրը «Սամվել Աղվանի Ավագյանի» բառերից հետո լրացնել՝ «Կարինե Թելմանի Հարությունյանի, և Արայիկ Սամվելի Ավագյանի ընդհանուր համատեղ» բառերը, իսկ որոշման նախաբանը՝ «Սամվել Աղվանի Ավագյանի (ծնված 23.10.1953 թ.)» բառերից հետո լրացնել՝ «Կարինե Թելմանի Հարությունյանի (ծնված 19.02.1956 թ.) և Արայիկ Սամվելի Ավագյանի (ծնված 16.03.1990 թ.)» բառերով:

2. Որոշման 1-ին կետը՝

ա) «Սամվել Աղվանի Ավագյանի» բառերից հետո լրացնել՝ «Կարինե Թելմանի Հարությունյանի, և Արայիկ Սամվելի Ավագյանի ընդհանուր համատեղ» բառերով:

բ) «272.7» թվերը փոխարինել «269.12» թվերով:

3.Վանաձոր համայնքի ղեկավարի 19 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 1887 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

4.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 12 փետրվարի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 12 փետրվարի 2025 թվականի թիվ 1887 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 447 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 29
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2025 թվականի N 1231

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2193 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 788 ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդանուշ Մխիթարի Առաքելյանի (ծնված՝ 22.04.1949թ.) 07.05.2025թ. թիվ 02/6074 դիմումը, 12/12/2019թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-18042025-06-0139 որոշումը, 22 նոյեմբերի 2019 թվականի թիվ 2193 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 22 նոյեմբերի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Սասունցիների փողոցի թիվ 21 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Վարդանուշ Մխիթարի Առաքելյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 2193 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում և 2-րդ կետում «631.3քմ» բառերը փոխարինել «574.5քմ» բառերով:
2. Որոշման նախաբանում «օրինական 600.0քմ և կից 31.3քմ» բառերը փոխարինել «օրինական 574.5քմ» բառերով:
3. Որոշման 2-րդ կետում «օրինական 600.0քմ մակերեսով հողամասին կից 31.3քմ» բառերը փոխարինել «օրինական 574.5քմ» բառերով:
4. Վանաձոր համայնքի ղեկավարի 22 նոյեմբերի 2019 թվականի թիվ 2193 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:
5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 01 ապրիլի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 22 նոյեմբերի 2019 թվականի թիվ 2193 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 788 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 29
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2025 թվականի N 1232

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՎԱՆԱԶՈՐ ՏԱՐՈՆ-4 ՄՄՇ 3/6-1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հենրիկ Վազգենի Նասիրյանի 07.02.2025 թվականի թիվ 02/2844 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12062015-06-0029 վկայականը, 26.05.2015 թվականին տրված թիվ 2/2-3 արձանագրությունը, 09.06.2015 թվականին տրված հողամասի կառուցապատման իրավունքի թիվ 126 պայմանագիրը, 01.06.2015 թվականի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի թիվ 1053-Ա որոշումը և անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնք, քաղաք Վանաձոր Տարոն-4 ՄՄՇ 3/6-1 հասցեում գտնվող, 0.0021 հա մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգել մինչև՝ 01.06.2035 թվականը:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Հենրիկ Վազգենի Նասիրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 21 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 21 քմ ընդհանուր մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 320 (երեք հարյուր քսան) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4 ՄՄՇ, 3/6-1 հողամաս հասցեին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 7/19 հողամաս հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2025 թվականի N1233

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ
55 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Մարատի Գալոյանի 20.05.2025 թվականի թիվ 02/6918 թվականի
թիվ 02/6918 դիմումը, 28.04.20 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի 28.04.2025թ. գույքի
նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու
մասին թիվ Կ-28042025-06-019 որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված
հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ
օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն
որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի թիվ 55
բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.06528 հա
մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված
հատակագծի:

2. 0.06528 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն
բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մայիսի 29
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2025 թվականի N 1234

